

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, համաձայն ՀՀ ԳԱԱ անդամների ընտրությունների կանոնակարգի հրապարակում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններին առաջադրված թեկնածուների ցուցակը ըստ մասնագիտությունների

### Ակադեմիկոսի թեկնածուներ

#### Լազերային ֆիզիկա

Կրյուչկյան Գագիկ Յուրիի՝ ֆիզ.մաթ. գիտությունների դոկտոր, (ֆ.մ.գ.դ.) թղթ.անդամ  
Կոստանյան Ռադիկ Բենիկի՝ ֆ.մ.գ.դ., թղթ.անդամ  
Պապոյան Արամ Վարդգեսի՝ ֆ.մ.գ.դ., թղթ.անդամ

#### Կոնդենսացված միջավայրի ֆիզիկա

Կարայան Համլետ Սուրենի՝ ֆ.մ.գ.դ., թղթ.անդամ  
Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի՝ ֆ.մ.գ.դ., թղթ.անդամ  
Պետրոսյան Ստեփան Գրիգորի՝ ֆ.մ.գ.դ., թղթ.անդամ

#### Ռադիոֆիզիկա, ռադիոաստղագիտություն

Ղուկյան Ալբերտ Գարեգինի՝ ֆ.մ.գ.դ., թղթ.անդամ

#### Ֆիզիկական քիմիա

Դավթյան Սևան Պարույրի՝ քիմ.գիտությունների դոկտոր, (ք.գ.դ.) թղթ.անդամ  
Թավադյան Լևոն Աղասիի՝ ք.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ

#### Բժշկագիտություն

Գալստյան Հայրապետ Մեսրոպի՝ բժշկ.գիտությունների դոկտոր, (բ.գ.դ.) թղթ.անդամ  
Աբրահամյան Ռազմիկ Արշալույսի՝ բ.գ.դ., թղթ.անդամ

#### Բուսաբանություն

Վարդանյան Ժիրայր Հմայակի՝ կենսաբ.գիտությունների դոկտոր, թղթ.անդամ  
Մայրապետյան Ստեփան Խաչատուրի՝ գյուղ.գիտությունների դոկտոր, թղթ.անդամ

#### Պատմություն

Մելքոնյան Աշոտ Աղասիի՝ պատմ.գիտությունների դոկտոր, (պ.գ.դ.) թղթ.անդամ

#### Արևելագիտություն

Սաֆրաստյան Ռուբեն Արամի՝ պ.գ.դ., թղթ.անդամ

#### Իրավագիտություն

Ղազինյան Գագիկ Սերգեյի՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, թղթակից անդամ

#### Սոցիոլոգիա

Պողոսյան Գևորգ Արամի՝ սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, թղթ.անդամ

#### Գյուղատնտեսական մեքենաշինություն

Թարվերդյան Արշալույս Պողոսի՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, թղթ.անդամ

### Թղթակից անդամի թեկնածուներ

#### Մաթեմատիկա

Խաչատրյան Աղավարդ Խաչատուրի՝ ֆ.մ.գ.դ.  
Նահապետյան Բորիս Սերգեյի՝ ֆ.մ.գ.դ.  
Գրիգորյան Մարտին Գևորգի՝ ֆ.մ.գ.դ.  
Հայրապետյան Հրաչիկ Սերգոյի՝ ֆ.մ.գ.դ.

#### Ինֆորմատիկա

Ասլանյան Լևոն Հակոբի՝ ֆ.մ.գ.դ.

#### Միկրոէլեկտրոնիկա

(տեխնիկական գիտություններ)

Մելիքյան Վազգեն Շավարշի՝ տ.գ.դ.

#### Լազերային ֆիզիկա

Մուրադյան Ատոմ Ժորայի՝ ֆ.մ.գ.դ.  
Մալաքյան Յուրի Պարույրի՝ ֆ.մ.գ.դ.  
Կոկանյան Էդվարդ Պիերի՝ ֆ.մ.գ.դ.  
Մելիքյան Արմեն Հովհիկի՝ ֆ.մ.գ.դ.

#### Կոնդենսացված միջավայրի ֆիզիկա

Պետրոսյան Աշոտ Գարեգինի՝ ֆ.մ.գ.դ.  
Մկրտչյան Արտակ Հենրիկի՝ ֆ.մ.գ.դ.

### Ռադիոֆիզիկա

Խաչատրյան Նորայր Ռուբենի՝ տ.գ.դ.  
Հախումյան Արսեն Ալեքսանդրի՝ ֆ.մ.գ.դ.

#### Տարրական մասնիկների ֆիզիկա

Ասատրյան Հրաչյա Մանվելի՝ ֆ.մ.գ.դ.

#### Օրգանական քիմիա

Թովուզյան Վիգեն Օնիկի՝ ք.գ.դ.  
Ղոչիկյան Տարիել Վլադիմիրի՝ ք.գ.դ.  
Հասարթյան Գագիկ Վաչեի՝ ք.գ.դ.

#### Երկրաբանություն

Կարախանյան Արկադի Ստեփանի՝ երկրափանքաբանական գիտությունների դոկտոր  
Հախվերդյան Լիոն Արտավազի՝ երկրաբանական գիտությունների դոկտոր

#### Մոլեկուլային կենսաբանություն

Բոյաջյան Աննա Սուրենի՝ կ.գ.դ.  
Կուրտիկյան Տիգրան Ստեփանի՝ ք.գ.դ.պ.

#### Շրջակա միջավայրի ուսումնասիրություն

Սաղաթեյան Արմեն Կառլենի՝ երկրափանքաբանական գ.դ.  
Մելիքյան Անդրեաս Շմավոնի՝ գյուղ.գիտ.դ.  
Փիրումյան Գևորգ Պետրոսի՝ տ.գ.դ.

#### Բժշկագիտություն

Բակունց Հենրի Հովսեփի՝ բ.գ.դ.  
Սարգսյան Աշոտ Ալեքսանդրի՝ բ.գ.դ.  
Գրիգորյան Ռուանդ Անաստասի՝ բ.գ.դ.  
Շուքուրյան Արթուր Կիմի՝ բ.գ.դ.  
Խուրազմիրյան Դրաստամատ Նահապետի՝ բ.գ.դ.  
Մանվելյան Հովհաննես Մորիսի՝ բ.գ.դ.

#### Հնագիտություն

Ավետիսյան Պավել Սեդրակի՝ պատմ.գիտությունների դոկտոր

#### Արվեստագիտություն

Աղասյան Արարատ Վլադիմիրի՝ արվեստագիտության.դոկտոր

#### Գրականագիտություն

Աղայան Նորայր Մարտիրոսի՝ բանասիրական գիտությունների դոկտոր  
Իսահակյան Ավետիք Վիգենի՝ բ.գ.դ.  
Եղիազարյան Վանո Ալբերտի՝ բ.գ.դ.  
Թամրազյան Հրաչյա Հրանտի՝ բ.գ.դ.  
Չաքարյան Անուշավան Հազարապետի՝ բ.գ.դ.  
Քալանթարյան Ժենյա Անդրանիկի՝ բ.գ.դ.

#### Լեզվաբանություն

Խաչատրյան Լալիկ Մնացականի՝ բ.գ.դ.  
Համբարձումյան Վազգեն Գուրգենի՝ բ.գ.դ.  
Գասպարյան Սեդա Քերոբի՝ բ.գ.դ.  
Խաչատրյան Գուրգեն Կիպրոնի՝ բ.գ.դ.

Առաջադրված թեկնածուների մասին կարծիքները մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ ուղարկել ՀՀ ԳԱԱ նախագահության կադրերի բաժին, հետևյալ հասցեով՝ Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռախոս՝ 52-70-51:

Նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 25-ը ՀՀ ԳԱԱ բաժանմունքների փորձագիտական հանձնաժողովներում տեղի կունենան լսումներ և քննարկումներ առաջադրված թեկնածուների վերաբերյալ:

Քննարկումների ստույգ օրվա վերաբերյալ տեղեկություն կարելի է ստանալ համապատասխան բաժանմունքից, հետևյալ հեռախոսահամարներով.

Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք՝ 52-96-30

Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք՝ 52-47-80

Բնական գիտությունների բաժանմունք՝ 52-58-05

Քիմիական և երկրի մասին գիտություններ բաժանմունք՝ 52-44-61

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք՝ 52-77-22

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն



գային գրականագիտության չափանիշներով:

1947 թ. Նիկոլ Աղբալյանը գրում է, թե Լևոն Շանթի այս կամ այն գործի մասին մամուլում հոդվածներ երևացել են, սակայն դեռ չի հետազոտվել «նրա բովանդակ գործը»: Ահա այդ շնորհակալ աշխատանքը կատարեց Սերգեյ Սարինյանը 1991-ին լույս տեսած «Լևոն Շանթ» մենագրությամբ: Շանթը մի առիթով ասել է, թե «քննադատներն ոչ ոք կրցած է անցնիլ իմ մտածումն սահմանն անդին: Ամենն շատ հասած են անոր և այդքան միայն»: Քաջատեղյակ Լ.Շանթի այս պահանջին՝ Սարինյանը, որն իր մտքի գանձարանում հավաքել էր հայոց գրականության երկու դարերը, հայ գրականագիտական միտքը հարստացրեց «Լևոն Շանթ» գրքով՝ հատկապես մեկնողական նորատիպ ձևով մեթոդաբանական հեղինակի դրամաները:

Սարինյանը խորամուխ եղավ հայ ազգային-ազատագրական պայքարի դրվագները պատկերող Ծերենցի, ԲաժՖու, Մուրացանի, այդ գաղափարախոսության մեջ իրենց անուրանալի դերը կատարած Ստեփանոս Նազարյանի, Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատ-

ուղեղում իրենց ուսմունքներով շաղկապվում են գրական իրողությունների հետ: Եվ ստեղծվել է Սարինյանի գրականագիտական ոճը, որը միայն իրենն է, և մի նախադասությունից անգամ այդ ոճը ճանաչելի է, ինչպես Գրիգոր Նարեկացուն կարող են ճանաչել: Սա մեծ նվաճում է:

Սարինյանի մեծագույն ծառայություններից է ՀՀ ԳԱԱ Ս. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի «Հայ մոր գրականության պատմություն» հատորների գլխավոր խմբագրի խիստ պատասխանատու դերը: Բացի այդ, մեծ թվով հոդվածներ տարբեր հատորներում գրել է հենց Սերգեյ Սարինյանը: Դրանք թվով 5 մեծադիր հատորներ էին. վերջինը լույս են տեսել 1979 թվականին: 1980-ին Սերգեյ Սարինյանն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Ս.Սարինյանի նախածննդությամբ և ընդհանուր խմբագրությամբ լույս է տեսել «Հայ քննադատության պատմություն» գրքի երկու ծավալուն հատորները (I - 1985, II - 1998):

1988-ից մինչև 2009 թվականը լույս տեսան գրականագետի «Հայոց գրականության երկու դարը» շարքի 5 հատորները, որոնց համար նա արժանացավ Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին: Նա ունի բազմաթիվ պարգևներ և պատվավոր կոչումներ: 1985-ին ստացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչումը: 2004 թվականի նոյեմբերին ծննդյան 80-ամյակի առիթով Արցախի Հանրապետության նախագահ Արկադի Դուկասյանը նրան հանձնել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը:

Սերգեյ Սարինյանն առաջնակարգ հռետոր է, եռանդուն գործիչ, գիտական գործի հմուտ կազմակերպիչ, պահանջկոտ նախ իր և ապա իր ենթակայների նկատմամբ, բացառիկ կարգապահ է, մեթոդաբանական պահանջված ժամից էլ շուտ, և դա նրա համար վարքագծի չափանիշ է: Հի ձգտել պաշտոնների, թեպետ ունեցել է դրա հնարավորությունը, չի մեկնել արտասահմանյան ուղևորությունների, բացի 2003-ի՝ Գրիգոր Նարեկացու «Մատենա ողբերգություն» պոեմի 1000-ամյակին Փարիզում կայացած գիտաժողովից: Նրա աշխարհը եղել է գրքերի աշխարհը, որպես «սիրելիք անգոր», և նա դեռ շրջում ու փնտրում է, գյուտեր է անում այնտեղ:

Պահել է կապը հայ դպրոցի հետ, երկար տարիներ նրա դպրոցական դասագրքերով են սովորել հայ մոր գրականության մեծերին: Վ. Նալբանդյանի, Ս. Սարինյանի և Ս. Աղաբաբյանի հեղինակությամբ 1976-ին Մոսկվայի «Высшая школа» հրատարակչությունը լույս ընծայեց «Армянская литература» հատորը:

Ակադեմիկոս Սարինյանը ստեղծել է դպրոց, և նրանում են իր պատրաստած բազմաթիվ ասպիրանտներն ու հայցորդները, որոնք գիտության դոկտորներ ու թեկնածուներ են: Այսօր նա մեծ հաջողությամբ ղեկավարում է Ս.Արեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտացված խորհուրդը, և ատենախոսությունների քննարկումները նրա հարցերով, էլույթներով ստանում են ակադեմիկոսի անհրաժեշտ պահանջկոտությունը:

Իր ինքնակենսագրական հուշագրությունը մեծատաղանդ գրականագետը սկսում է գոմշակովի եղջյուրների մեջ բռնված կենդանի գայլի մանկական հեռավոր միֆական թվացող հիշողությունների պատկերով և ավարտում է նույնքան միֆական անծնական սիրտ պատմությամբ, որը գուցե իրական է: Իր կյանքով այս ոչ սովորական գրականագետը ձեռնոց է մետել ճակատագրին, որը գուշակել էր զննողին՝ ասելով. «Կապրես երկար, բայց դժբախտ»: Սերգեյ Սարինյանը երջանիկ է, երջանիկ է իր գիտական վաստակով, հրաշալի դատեր, փեսայի, թոռների առկայությամբ, աշխատանքային ընկերների նվիրվածությամբ, Հայաստանի ազգային ակադեմիայի կենսահաստատ գոյությամբ, ազատագրված և ծաղկող Արցախով, հայ պետականության իրողությամբ:

## ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

# ՀԻԱՑՄՈՒՆԻ ՈՒ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ԳՐԱԿԱՆԱԳԵՏԻ ՎԱՍՏԱԿԸ

Այս տարի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի համար յուրօրինակ հանրագումարային է: Նա Հայաստանի գիտությանը ներկայացնում է իր երկարամյա գիտական արդյունքները՝ 26 մեծագրքեր գրքերով և հազարի սահմանը վաղուց անցած հոդվածներով:

Սերգեյ Սարինյանը ծնվել է Արցախի Սեյտիչեն (այժմ՝ Խաչեն) գյուղում, և ինչպես ինքն է խոստովանում «Ի հեճուկս» աղմկահարույց ինքնակենսագրականում, սերուն է հերոսական Հասան-Ջալալյանների ազնվական տոհմից: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի գյուղում և Բաքվում, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, նախախնամությունը պատերազմի թոհուրոհի մեջ պահպանել է կյանքը՝ ականից վիրավորված ոտքի ինժեներային հոսպիտալային տառապանքներից հետո վերստին տուն ուղարկելով: Դեռ դպրոցում սովորելիս օրագրում ինքն իրեն նպատակադրել է՝ Երևանի պետական համալսարան և ապա ասպիրանտուրա: Պատանին զգացել է Աստուծոց իրեն մատուցված շնորհը՝ գրականագետի կոչումը, և նա էլ մեծ Սայաթ-Նովայի նման կարող է ասել. «Իմ գիրն ուրիշ գրեն է, իմ ջուրն ուրիշ ջրեն է»:

Լինել գրականագետ նշանակում է լինել մեծ ընթերցասեր, իսկ Սերգեյ Սարինյանը մեծագույն ընթերցասեր է: Նա կարդում է այսօր նույն անհագնությամբ, ինչպես երիտասարդ օրերին, երբ յուրացնում էր հույն փիլիսոփաներին, եվրոպական լուսավորիչներին ու փիլիսոփաներին, հայ, ռուս, եվրոպացի, ամերիկյան դասականներին:

Սերգեյ Սարինյանը ոչ միայն գրականագետ է, այլև եզակի գրաքննադատ: Գրաքննադատի նրա կատարելատիպը եղել է մնում է Վ.Բելինսկին, որը հավանաբար ցարդ չգերազանցված է միջազգային չափանիշներով:

Սերգեյ Սարինյանը աշխատություններ է նվիրել գրական կարևորագույն երկու մեթոդներին՝ ռեալիզմին ու ռոմանտիզմին, և նրա առաջադրած դրույթներն այսօր ելակետային են: Նրա գրքերից պարզ է դառնում, թե որքան խորքով գիտի XIX և XX դարերի հայ գրականությունն ու մամուլը:

Նրա մենագրությունները՝ նվիրված ԲաժՖուն, Մուրացանին, Լևոն Շանթին, Պարույր Սևակին, դասական գրականագիտության դրսևորումներ են՝ գրված միջազ-

**ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նոյեմբերի 17-ին շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանին՝ ծննդյան 90-ամյակի առթիվ: «Մեծ է Ձեր ավանդը հայ գրականագիտության և գրական քննադատության զարգացման գործում: Ձեր գիտական ուսումնասիրություններն ու հոդվածները հատկապես հայ նորագույն գրականության ուսումնասիրման ասպարեզում նշանակալի են և մեր գրական գործընթացի մասն են կազմում:**

**Բարձր ենք գնահատում նաև Ձեր մանկավարժական և հասարակական շնորհակալ աշխատանքը:**

**Մաղթում ենք Ձեզ առողջություն, երջանիկ կյանք և ամենայն բարիք»,- ասված է ՀՀ նախագահի շնորհավորական ուղերձում:**

կանյանի, Գրիգոր Արծուրունու և մյուսների գործերի մեջ, և ճիշտ ժամանակին ծնվեց նրա հրաշալի ուղեցույց-գիրքը՝ «Հայ գաղափարաբանությունը» (1998): Այդ գրքում հրապարակախոս-գրականագետը պրոբլեմի արմատները բացահայտելուց հետո անցնում է մեր օրերին՝ Արցախյան ազատագրական շարժումներին և նրա հետևանքներին:

Իր ողջ գիտական գործունեության ընթացքում Սարինյանը մերժել է դիվերտանությունը գիտական ասպարեզում և վարժապետությունն ու տիրացու լինելը բանավեճերում: Նա առաջիններից մեկն էր, որ նկատեց Հրանտ Մաթևոսյանի դասական գրող լինելու տվյալները՝ Սուրեն Աղաբաբյանին և Լևոն Հախվերդյանին զուգընթաց:

Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը փիլիսոփա գրականագետ է և փիլիսոփա գրաքննադատ: Մակրոկոսմի և միկրոկոսմի հարաբերությունները հայ գրականության մեջ, ինչպես նաև համընդհանուր գրականության մեջ բացահայտում է փիլիսոփայության ամենատարբեր դիմակներով: Պլատոն, Արիստոտել, Կանտ, Հեգել, Նիցշե, Շոպենհաուեր և այլ փիլիսոփաներ գիտնականի

րանտներին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը ինստիտուտի կողմից շնորհավորելով Սերգեյ Սարինյանին, նշեց նրա դերը Հայ ժողովրդի պատմության բազմափառապատկերային հայ գրականության պատմությանը նվիրված բաժինների գրության գործում:

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի կողմից ողջույնի խոսք ասաց ու Ս. Սարինյանի ուսումնասիրությունների հասարակագիտական հնչեղության մասին խոսեց ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Էդուարդ Միլիտոնյանը շեշտեց, որ Ս. Սարինյանը, լինելով հայ գրականության պատմաբան և տեսաբան, միաժամանակ զբաղվում է արդի գրական ընթացքի հիմնախնդիրներով և

որպես գրաքննադատ իր գրական մասնակցությունն է բերում գրական կյանքին և գրողների միության աշխատանքներին:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, Բ. Գ. Դ. Գուրգեն Խաչատրյանը հորեկարին պարգևատրեց ինստիտուտի ոսկե մեդալով:

«Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի գիտական վաստակը» զեկուցմամբ հանդես եկավ գրականության ինստիտուտի փոխտնօրեն, Բ. Գ. Դ. Վարդան Դարիկյանը:

Ս. Սարինյանի գիտական գործունեությունը տարբեր տեսանկյուններից ներկայացրեցին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Սարգիս Հարությունյանը, Աելիտա Դուլիսյանյանը և Հենրիկ Հովհաննիսյանը:

## ՄԵԾԱՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ Ս. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ ակադեմիկոս, Բ. Գ. Դ. Սերգեյ Սարինյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանդիսություն:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Սարտիրոսյանը ընթերցեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի ուղերձը, ապա արժևորեց հորեկարի տասնամյակների գիտահասարակական գործունեությունը:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի ողջույնի ուղերձը ներկայացրեց և Ս. Սարինյանի, որպես Արցախի նվիրյալ զավակի մասին, խոսեց ԼՂՀ գրողների միության նախագահ, Բ. Գ. Դ. Վարդան Հակոբյանը: Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը,

շնորհավորելով հորեկարին, նշեց, որ նա հայ գրականությունը քննում է հայոց պատմության և ընդհանրապես պատմական գործ-ընթացների համատեքստում:

Գրականության ինստիտուտի տնօրեն, Բ. Գ. Դ., պրոֆ. Ավետիք Իսահակյանը ներկայացրեց Ս. Սարինյանի գիտական գնահատական գործունեությունը, ինստիտուտում ծավալված մեծ աշխատանքը՝ որպես հայ մոր գրականության բաժնի վարիչ և ինստիտուտում գործող գրականագիտության մասնագիտական խորհրդի նախագահ, մադ-թելով, որ իր գիտական հարուստ փորձը երկար տարիներ փոխանցի երիտասարդ գիտաշխատողներին և գիտության բնագավառում առաջին քայլերը կատարող ասպի-



## ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

Նշանավոր գիտնական, հայագետ, ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Ժան Պիեռ Մահեն Ժնվել է 1944 թ. Փարիզում: Զսաներկու տարեկանում ստացել է բարձրագույն դասական բանասիրական կրթություն:

Հիմնական ուսումնասիրությունները նվիրված են արևելագիտության, կովկասագիտության, հայագիտության հրատապ խնդիրներին: Արդյունավետ ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի և Վրաստանի պատմության վերաբերյալ, զբաղվել է հայերենով և հայ գրականությամբ, գրաբարից ֆրանսերենի է թարգմանել հայ հին ձեռագրերն ու գրական հուշարձանները, այդ թվում՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանը»:

Հին ձեռագրերի և գեղարվեստական գրականության ֆրանսիական ակադեմիայի իսկական անդամ է 2001-ից, ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ 1990-ից,



թույլությունների խաչմերուկում, ուստի և ենթարկվում էր հարևան երկրների՝ Պարսկաստանի, Ասորեստանի, Բյուզանդիայի և անգամ Եվրոպայի ու Միջին Արևելքի երկրների ազդեցությանը: Ինչ վերաբերում է հայկական արվեստի խորհրդապաշտությանը, ապա դրա պատճառը գիտնականը տեսնում է պատմական իրադարձությունների մետաֆիզիկական զարգացման մեջ, երբ Տրդատ արքան 4-րդ դարում հրամայում է քանդել հեթանոսական, մինչքրիստոնեական բոլոր հուշարձանները: Լույսը դառնում է Բարու, խավարը՝ Չարի մարմնացում: Որ հայկական եկեղեցիներն արևելահայաց են, դրանում նույնպես խորհրդապաշտություն կարելի է տեսնել: Լույսն արևելքից է ծագում: Հայկական արվեստում անմահության խորհրդանիշ են համարվում խաղողի ողկույզը և նույնը: Դրա համար էլ նույն ու խաղողի ողկույզը զարդարում են հայկական եկեղեցիների լուսամուտները: Խորհրդանշական մոտիվներ ունեն նաև հայ հոգևոր գրքերն ու ձեռագրերը:

«Մենք գիտենք, որ հայերը մեծ դեր են խաղացել համաշխարհային քաղաքակրթության մեջ», - ասում է Ժան Պիեռ Մահեն: «Որպեսզի աշխարհն ավելի լավ ճանաչի Հայաստանը և հայկական մշակույթը, պետք է ավելի հաճախ խոսքը տանք հայկական, առաջին հերթին՝ հին և միջնադարյան արվեստի կոթողներին: Ոչ ոք չի կարող ավելի լավ վկայել համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ հայ ժողովրդի ներկայության, նրա ավանդի մասին, քան պատմական հուշարձանները, կերպարվեստի և կիրառական արվեստի ստեղծագործությունները», - ասում է նա:

Ժան Պիեռ Մահեն հայ հին և միջնադարյան արվեստի ամենախոշոր մասնագետն է, բայց նաև հոյակապ գիտի արդի հայ մշակույթը, ճարտարապետությունը ու արվեստը: Այդ արվեստի ապագան նա տեսնում է այլ մշակույթների յուրացման, ստեղծագործական փոխառման և փոխառածը ազգային հիմքի վրա դնելու մեջ: Դրա համար անհրաժեշտ է հայ միջնադարյան հոգևոր արվեստը դիտարկել ոչ թե որպես մի ինչ-որ սահմանափակ գործոն, պարտադիր դրույթ կամ վերջնական ճշմարտություն, այլ որպես աշխարհի ինքնատիպ ու անկրկնելի տեսլական, որպես աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի ավանդական ընկալում:

Ժան Պիեռ Մահեն գիտակրթական բազմամյա և բեղմնավոր գործունեության համար արժանացել է երկու բարձրագույն պարգևի՝ «Ակադեմիական արձավեցիներ» ֆրանսիական շքանշանի և Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալի:

Ժան Պիեռ Մահեն այսօր էլ սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

ՍՓՅՈՒՆԵՐ ԲԱԺԻՆ

## ԺԱՆ ՊԻԵՐ ՄԱՀԷ

Վրաստանի ԳԱ պատվավոր անդամ:

Ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանը, ուսանել անվանի գիտնականներ Ժան Մենարի, Շառլ Մերսիեի, Ֆեդերիկ Ֆեյդիի մոտ:

1967-1969 թթ. դասավանդել է Սորբոնի Լատինական ինստիտուտում, 1969-1975 թթ.՝ Ստրասբուրգի հումանիտար գիտությունների համալսարանում, 1975-1977 թթ.՝ Երևանի պետական համալսարանում, 1979-ից դասավանդում է Փարիզի ֆրանսիական քոլեջում:

Երեք տարի շարունակ՝ 1975-1977 թթ., Ժան Պիեռ Մահեն երևանում ուսումնասիրել է Մատենադարանի արխիվները: Հենց այդ տարիներին էլ լուրջ և անբուժելիորեն «հիվանդացել» է հայագիտությամբ: Դա սեր էր ողջ կյանքի համար:

1977-1987 թթ. եղել է Սորբոնի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի պրոֆեսոր, 1988-ից Բարձրագույն դպրոցի չորրորդ վարչության տնօրենն է, 2002-ից՝ Փարիզի ասիական ընկերության նախագահը: 1979-ից հայագիտական «Revue des études armeniennes» ամսագրի գլխավոր խմբագիրն է:

Լատիներենի (1975), բանասիրության (1981) դոկտոր է, 1977-ից՝ պրոֆեսոր:

Հաշվի առնելով Ժան Պիեռ Մահեի գիտական, մանկավարժական, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 1990 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Երբ 2007 թ. փետրվարին Լուվրում բացվեց «Սրբազան Հայաստան» ցուցահանդեսը՝ ամենանշանավորը Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակում, Լուվ-

րի թանգարանի տնօրեն Անդրե Լուարետը և աշխարհահռչակ հայագետ Ժան Պիեռ Մահեն ամենապահանջված արվեստագետներն էին, որոնց շուրջ մշտապես խմբվում էին բազմաթիվ մարդիկ: Լուվրի թանգարանի ցուցասրահները ցուցադրության ողջ ընթացքում լեւի-լեցուն էին, մարդիկ ցանկանում էին ավելի մոտիկից ծանոթանալ հայ հնագույն մշակույթին, հայ արվեստին: Սկզբում Անդրե Լուարետն այցելուներին, որոնց թվում էին նաև Ֆրանսիայի և Հայաստանի նախագահները, ծանոթացրեց հայ բազմադարյան արվեստի գանձերին: Այնուհետև նրանց ուշադրությունն ամբողջովին զավթեց Ժան Պիեռ Մահեն. Նա բացատրում, մեկնաբանում էր բոլոր ցուցադրամուշկները՝ հոժարալամ դառնալով ցուցադրության գիդ-էքսկուրսավարը:

Խոսելով հայկական արվեստի ինքնատիպության և յուրօրինակության մասին՝ գիտնականն ընդգծում է. «Ոմանք կարծում են, թե սա ընդամենը բյուզանդական կամ մուսուլմանական արևելաքրիստոնեական արվեստի մի ճյուղն է՝ զուտ կրոնական բնույթի արվեստ: Այս տեսական պնդումներն անմիջապես անհետանում են, երբ Հայաստան են այցելում կամ հայկական առարկաներ են հետազոտում: Դրանցում մենք ոճական և նյութական անվիճելի յուրօրինակություն ենք հայտնաբերում: Եթե փորձենք վերլուծել այդ ինքնատիպության պատճառները, ապա, ըստ իս, դա կապված է առաջին հերթին Հայաստանի աշխարհագրական դիրքի հետ»: Գիտնականի համոզմամբ, բնական պատմեշներով պաշտպանված Հայաստանը ստեղծել է ավանդույթներ, որոնք բռնել են դարերի քննությունը: Մյուս կողմից՝ Հայաստանը գտնվում էր տարբեր քաղաքակր-

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

## Միգրացիայի արդի խնդիրները

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սոցիալ-քաղաքական հետազոտությունների ինստիտուտը, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում ու ժամանակակից սոցիալական գիտությունների բարձրագույն դպրոցը 2014 թ. նոյեմբերի 5-ին Մոսկվայում և նոյեմբերի 6-7-ին Երևանում գումարեցին «Միգրացիոն կամուրջներ Եվրասիայում» ծրագրի շրջանակներում, անցկացրին VI միջազգային գործնական գիտաժողով՝ «Միգրացիայի դերը Եվրասիայի ուղարկող և ընդունող երկրների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման գործընթացում. Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններ» խորագրով:

Գիտաժողովը կազմակերպել էր Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի, ՄԱԿ-ի Ազգաբնակչության հիմնադրամի (UNFPA), Միգրացիայի միջազգային կազմակերպության, Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտի աջակցությամբ:

Գիտաժողովի նպատակներն էին.

1) աշխատանքային միգրացիայի հարցերի հետազոտմամբ և գործնա-

կան կարգավորմամբ զբաղվող գիտնականների, փորձագետների գործնական աշխատողների միավորումը,

2) փորձագիտական գնահատումը և աշխատանքային միգրացիայի արդյունավետ գործնական կարգավորման մեխանիզմների ինտեգրումը միգրացիոն քաղաքականությանը,

3) աշխատանքային միգրացիայի հետազոտման բնագավառում միջազգային ցանցի զարգացումը:

Գիտաժողովի շրջանակներում գործում էին ինը կլոր սեղաններ տեյալ թեմաներով.

■ «Միգրացիան Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վերափոխումների համատեքստում. նոր միտումներ և զարգացման հետևանքներ»:

■ «Աշխատանքային միգրացիան Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում տնտեսական ինտեգրման համատեքստում. բարդություններ ուղարկող և ընդունող երկրների համար, չիրագործված հնարավորություններ և նոր հեռանկարներ»:

■ «Սփյուռքի դերը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում»:

■ «Հայ աշխատանքային միգրացիան Ռուսաստանի Դաշնությունում. ի-

րավական դրության և աղապտացիայի արդիական հարցերը»:

■ «Միգրանտների շահագործումն ու թրաֆիկինգը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում. հակազդեցության մասշտաբները, ձևերն ու միջոցները»:

■ «Կրթական միգրացիան Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում. սոցիալ-տնտեսական զարգացման նոր դերն ու վեկտորները»:

■ «Միգրացիայի ազդեցությունը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ուղարկող և ընդունող երկրների ժողովրդագրական զարգացման ու բնակչության վերարտադրողական առողջության վրա», և այլն:

Գիտաժողովի գործնական լեզուներն էին՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը:

Կազմկոմիտեի համանախագահներն էին՝ տնտ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՌԳԱ թղթակից անդամ, ՌԳԱ սոցիալ-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի սոցիալական ժողովրդագրության և տնտեսական սոցիոլոգիայի կենտրոնի ղեկավար Սերգեյ Ռյազանցևն ու ՀՀ ԳԱՍ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, սոց. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը:

Մոսկովյան գիտաժողովի գիտական հոդվածների ժողովածուն հրատարակվել է Մոսկվայում:

Երևանում գիտաժողովի աշխա-

տանքին մասնակցում էին ավելի քան 40 մասնագետներ աշխարհի 9 երկրներից՝ Ռուսաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Տաջիկստանից, Պորտուգալիայից, ճապոնիայից, Հնդկաստանից, Անգոլայից և Հայաստանից: Գիտաժողովի աշխատանքներին ինտերնետ-միացման միջոցով մասնակցում էին նաև մասնագետներ այլ երկրներից:

Նախորդ հարյուրամյակից սկսած՝ միջազգային միգրացիան իրապես ստացել է համաշխարհային մասշտաբներ: Միավորված ազգերը կազմակերպության տվյալների համաձայն՝ XX դարի 90-ական թվականներին աշխարհում եղել է ավելի քան 200 միլիոն միգրանտ: Եվ այս թիվն անընդհատ աճում է:

Հայաստանի բնակչության արտահոսքի ծավալները բավականին լուրջ են, և այդ պատճառով Հայաստանում միգրացիայի խնդիրները, միգրացիոն հոսքերի կարգավորման հարցերը ոչ միայն գիտական, այլ նաև էական քաղաքական և ռազմավարական նշանակություն ունեն: Սրանք արդիական հարցեր են, որոնցով մտահոգված են և՛ հայ հասարակությունը, և՛ կառավարությունը, և՛ խորհրդարանը:

Հայաստանը մտել է Մաքսային միություն և ինտեգրվելու է Եվրասիական միությանը: Դա իր հերթին ստեղծում է նոր քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններ հետագա զարգացումների համար: Եվ ակնհայտ է, որ կծանալով մի միգրացիոն տարածք, այդ թվում նաև հայ աշխատանքային միգրանտների համար:



յունը, որ հայ բեմի նվիրյալներից մեկը՝ Յովհաննես Ջարիֆյանը, 1936-1937 թթ. ԱՄՆ-ի և այլ երկրների բեմերում հանդես է եկել վեպի գլխավոր հերոսի՝ Գաբրիել Բագրատյանի դերով:

Ներկայացվող գրքի էջերում հեղինակի մեղավական աշխատանքի շնորհիվ ճշգրտվում և հստակեցվում են պատմական մի շարք ուշագրավ իրադարձություններ: Այսպես, պարզվում է, որ 1924 թ. մինչև իր վեպը գրելը, Ֆ. Վերֆելը Վենետիկում հանդիպել է Ավետիք Իսահակյանին, նրանից լսել հայ ժողովրդի պատմության շատ ու շատ հիշարժան դրվագներ: Որ ԱՄՆ-ում բնակվող մեծամունդ կենսաքիմիկոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր ակադեմիկոս Մանասե Սևակը դեռևս 1934 թ., այն է՝ «Մուսա լեռան քառասուն օրը» բեռլինում լույս տեսնելուց մեկ տարի անց, ԱՄՆ-ում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» ամսագրում գրել է հայ իրականության մեջ առաջին գրախոսությունը Ֆ. Վերֆելի գրքի մասին: Որ Լևոն-Կարապետ Պալճյանը, ով հետագայում պիտի վերանվանվեր Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս, 1940-ին իր ծննդավայր Բուխարեստում լույս է ընծայել «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» աշխատությունը:

## ՄԵՆԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ «ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԲԱՌԱՍՈՒՆ ՕՐԸ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

Մուսա լեռան գոյամարտի 100-ամյակին ընդառաջ՝ ընթերցողի սեղանին է դրվել հրեա գրող, հայ ժողովրդի անկաշառ բարեկամ Ֆրանց Վերֆելի՝ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին նվիրված՝ Ասատուր Փաշայանի մենագրությունը (տողերիս հեղինակը գրել է գրքի «Երկու խոսքը»):

Ֆ. Վերֆելի՝ գերմաներենով գրված «Մուսա լեռան քառասուն օրը» (հրատարակվել է 1933 թ. Բեռլինում) Պարույր Միքայելյանի արևելահայերեն թարգմանությամբ երևանում առաջին անգամ լույս է տեսել կես դար առաջ՝ 1964-ին, այն տարիների համար շատ մեծ՝ 50 հազար տպաքանակով: Նկատենք, որ մինչ այդ մեզանում հայոց Մեծ եղեռնին նվիրված օտարազգի որևէ հեղինակի գեղարվեստական գիրք չէր հրատարակվել:

Ինչպես վկայում են աշխատության վերջում բերված շուրջ 500 մատենագիտական հղումները, խնդրո առարկա վեպին նվիրված պատկառելի թվով գրականություն կա: Դրանք հիմնականում հայերենով և ռուսերենով հոդվածներ են, հուշագրություններ, 1915 թ. Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանության մասնակիցների վկայություններ, հարցազրույցներ:

Ընթերցողին տեղեկացնենք, որ 1996-ին Մոսկվայում ռուսերենով լույս տեսած Մեջի Փիրունովայի «Մարգարեությունը իրականանում է: Վերֆելը և Հայաստանը» մենագրությունում «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին նվիրված էջեր կան: Սակայն ցայսօր Ֆ. Վերֆելի վեպին նվիրված հայերենով առանձին մենագրություն չի հրատարակվել ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ Սփյուռքում: Ա. Փաշայանի այս աշխատանքը լրացնում է այդ բացը:

Գիրքը, ըստ էության, սկսվում է Վահան Թեքեյանի «Մուսա լեռան» բանաստեղծությամբ, ինչն աներկբայորեն կարող ենք համարել մենագրության լեյտմոտիվը: Աշխատանքում ներկայացված են Վերֆելի գրքին առնչվող շատ ու շատ հետաքրքիր և գիտական շրջանառության մեջ քիչ հանդիպող իրողություններ: Ահա դրանց ոչ լրիվ ցանկը. վեպի հայերեն երեք թարգմանությունները՝ 1935 (Սոֆիա), 1964 (Երևան) և 1984 (Անթիլիաս): Մշակույթի և գիտության շուրջ ութ տասնյակ հայ ու օտարազգի երախտավորների կարծիքները Ֆ. Վերֆելի գրքի մասին: «Մուսա լեռան քառասուն օրը» հայ թատրոնում» գլխում մենագրության հեղինակը քննարկել է աշխարհի տարբեր անկյուններում, այդ թվում՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի թատերական ներկայացումները: Շատերի համար հայտնություն կլինի պատմական այն իրողու-

թյունը, որ հրողություն ևս. Ա. Փաշայանը գիտական շրջանառության մեջ է դրել Վիլյամ Սարոյանի ստեղծագործական կյանքին առնչվող հետևյալ դրվագը. 1980-ին երևանում անգլերենից հայերեն կատարված թարգմանությամբ լույս տեսած Լևոն-Ջավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» ինքնակենսագրական վեպի առաջաբանը գրել է Վ. Սարոյանը, որտեղ ակնարկ կա «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի մասին: 1961-1962 թթ. Նյու Յորքում անգլերենով հրատարակված այս վեպի առաջաբանը նույնպես գրել է Վ. Սարոյանը:

Առաջին անգամ հայ ընթերցողը տեղեկանում է, որ 1984-ին Անթիլիասում (Լիբանան) Բաբկեն Փափազյանի՝ ֆրանսերենից հայերեն կատարած թարգմանությամբ լույս է տեսել «Մուսա լեռան քառասուն օրը», որի առաջաբանը գրել է այն տարիների Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Կարծում եմ՝ շատերին կհետաքրքրեն մենագրության էջերում բերված Ավետիս Ահարոնյանի, Գարեգին Նժդեհի, Ավետիք Իսահակյանի, Հրաչյա Աճառյանի, Պարույր Սևակի, Վահագն Դավթյանի, Սիլվա Կապուտիկյանի, Արփեհիկ Չարենցի, Միխայիլ Դուդինի, Բոգդան Գեմբարսկու, Լյուդմիլա Մոտալովայի, Աննա Ջեգերսի, Վրբան Ստամատովի, Յաիր Աուրոնի և այլոց կարծիքները Ֆրանց Վերֆելի ու նրա անմահ ստեղծագործության մասին:

Ամենահին պատահական չէ, որ այս մենագրության հեղինակը Ասատուր Փաշայանն է, քանզի նա մուսալեռցի բանասեր, հասարակական-քաղաքական գործիչ, Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանության ակամատես Ալեքսանդր Փաշայանի (1909-1965) արժանավոր որդին է: Ասենք, որ 1965 թ. երևանում և մեր հանրապետության այլ քաղաքներում Ա. Փաշայանը «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին նվիրված մեծ թվով դասախոսություններ է կարդացել: Նա է «Էջմիածին» հանդեսի՝ 1965-ի բացառիկ համարում Ֆ. Վերֆելի վեպին նվիրված առաջին հոդվածի հեղինակը Խորհրդային Հայաստանում:

Ինչևէ. արձանագրենք, որ Ասատուր Փաշայանն իր առջև դրված խնդիրը լուծել է մեծ պատասխանատվությամբ և, որ չափազանց կարևոր է, սիրով ու նվիրումով:

Անուշավան ՋԱԲԱՐՅԱՆ  
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար, բանասիրության դոկտոր

## ԳՈՂԱՆԱԼՆ մեղք է

Մանհեթենյան շտապօգնություն զանգահարեցին սուպերմարկետից: Գնորդ մի կին վատ էր զգացել և ուշաքափվել: Արագ տեղ հասած շտապօգնության բժիշկը թեքվեց ուշաքափվածի վրա, արծակեց բաճկոնի կոճակները և քար կտրեց: Կնոջ կրծքի վրա հանգչում էր մի պարարտ սառեցրած հավ:

Ոստիկանական բաժանմունքում 36-ամյա տնային տնտեսուհի Էվի Բաբկերթը պատմեց, որ այդ օրը ինքը տուն է վերադարձել բավական ուշ: Ամուսնու գալուն քիչ ժամանակ էր մնացել, իսկ սառնարանը դատարկ էր, և ընթրիք պատրաստելու համար տանը ոչինչ չկար:

Գալով խանութ՝ Էվին հանկարծ հիշեց, որ դրամապանակը մնացել է տանը և... խելահեղ քայլի դիմեց: Խանութի սառնարանից վերցրեց մի պարարտ սառեցրած հավ և թաքցրեց բաճկոնի տակ՝ կրծքավանդակի հատվածում: Քիչ անց սառնարանից Էվիի շունչը կտրվեց: Եվ քանի որ թաքցրած հավը մարդկանց ներկայությամբ չէր կարող հանել, նա շտապեց դեպի խանութի ելքը: Մի քանի քայլ չարած՝ նա ուշաքափվեց և տապալվեց գետին:

Դատարանը մտավ «ակամա գողի» վիճակի մեջ և շատ մեղմ պատիժ սահմանեց՝ փոքրիկ դրամական տուգանք:

## Որքան մաքուր՝ այնքան վաթ

Կա կարծիք, թե որքան մարդկությունը արդյունավետ է պայքարում գլոբալ տաքացման դեմ, այնքան արագացնում է այդ գործընթացը: Մտավախություն կա նաև, որ արդեն 2100 թվականին Եվրոպան կարող է վերածվել անապատի: Այսպիսի հետևության են հանգել բրիտանացի գիտնականները: Շարունակում է իշխել այն տեսակետը, որ ջերմաէկտրակայանների վառվող գազն ու նավթը ավելացնում են մթնոլորտ նետվող ջերմոցային գազերի ծավալը, որն էլ գլոբալ տաքացման գլխավոր պատճառներից մեկն է:

Հիմա գիտնականներն այլ կերպ են մտածում: Նրանք գտնում են, որ գազի և նավթի այրումից առաջացած ծծմբի երկօքսիդի մասնիկները, բարձրանալով մթնոլորտ, նվազեցնում են օդի թափանցելիությունը և արգելա-կում արևի ճառագայթների ներթափանցումը Երկրի մակերևույթ:

Այլ կերպ ասած՝ այդ մասնիկների խտությունը դառնում է հովանոց և պաշտպանում մեզ արևային ռադիացիայից: Ուրեմն որքան քիչ է այդ փոշու ծավալը, այնքան արևն ավելի հեշտ է իր վնասակար ճառագայթները հասցնում Երկիր:

Սակայն կա նաև այլ խնդիր. ծծմբի երկօքսիդը վնասակար է և՛ էկոլոգիայի, և՛ մարդկանց առողջության համար: Այնպես որ անվավեր համարել բնական ջերմաէներգա-կիրների այրումը սահմանափակող միջազգային համաձայնագրերը չի կարելի: Ստացվում է անհեթեթ վիճակ, որքան մեք ակտիվորեն ենք պայքարում մեր սեփական կենսագործունեությունն ապահովող նյութերի դեմ, այնքան Երկիր մոլորակը ուզում է ազատվել մեզանից: Երևի մարդիկ արդեն ծանծրացրել են ծերուկ մոլորակին:

(Ռուսական մամուլից)



ներ, մի քանի տասնյակ հողվածներ:

1963 թ. լույս է տեսել «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» հետազոտությունը: Այն նվիրված է XIX դարի 50-60-ական թթ. մեր գրական լեզվի խնդիրների լուսաբանմանը:

1974 թ. հրատարակվել են «Ածանցների հոմանշությունը և հոմանիշ ածանցները», մեկ տարի անց՝ 1975-ին, «Գոյական հիմքերից ածական կազմող վերջածանցները ժամանակակից հայերենում» աշխատությունները:

1978 թ. լեզվաբանը գիտական հանրության դատին հանձնեց «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» մեծարժեք հետազոտությունը, որտեղ տրված է ժամանակակից հայերենի ածանցական կառուցվածքների և ածանցման կաղապարների համաժամանակյա նկարագրությունը: Ուսումնա-

բառարանագրական աշխատություն է, որի բառացանկն ընդգրկում է ոչ միայն հայ լեզվաբանական-քերականագիտական եզրույթները՝ սկսած V դ.-ից մինչև նորագույն ժամանակները, այլև ընդհանրապես տվյալ ժամանակահատվածում լեզվաբանության մեջ տարածված եզրույթներն ու հասկացությունները:

Պակաս արժեքավոր չէ նույն թվականին լույս ընծայված «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (համահեղինակ՝ Աշոտ Սուքիասյան): Այն պարունակում է ավելի քան 24 հազար դարձվածալին միավոր և ընդգրկում է ինչպես արդի գրական հայերենի, այնպես էլ ժողովրդական, գավառական-բարբառային այն դարձվածքները, որոնք լայնորեն թափանցել են գեղարվեստական գրականության մեջ կամ էլ գործածվում են ժո-

տագիտության, քանզի շատ բարդ էր հետազոտության ձեռագրերը համակարգելը, և եթե երկու անվանի լեզվաբանները նշված հատորը չիրատարակեին, ապա շատ հավանական է, որ հետագայում հնարավոր չէր լինի այդ բանն անել:

Նրա գրչին է պատկանում նաև «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկը» (հնչյունաբանություն, բառագիտություն):

2011 թ. լույս տեսավ «Դպրոցական բառակազմական բառարանը»: Այն հայերենի հրատարակված առաջին բառակազմական բառարանն է, պարունակում է մոտ 20 հազար բառահողված, որոնք արտացոլում են ավելի քան 30 հազար բառի կազմությունը:

Նշանավոր հայագետը արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի օտարազգի և սփյուռքահայ ուսանողների համար հեղինակել է հայերենի արժեքավոր դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ուսուցողական ու տեղեկատու նյութեր և այլն:

Սերգեյ Գալստյանն իր բազմարդյուն գործունեության ընթացքում հաջողությամբ համատեղել է դասախոսական, վարչական ու գիտահետազոտական աշխատանքները. 1964-70 թթ. և 1980-82 թթ. եղել է բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-79 թթ.՝ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան, 1971-80 թթ.՝ նույն ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

ՀՀ նախագահի՝ 2014 թ. սեպտեմբերի 8-ի հրամանագրով «Գիտության և կրթության բնագավառների զարգացման գործում ներդրած ավանդի, երկարամյա արդյունավետ գիտամանկավարժական գործունեության համար» պրոֆ. Ս. Ա. Գալստյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

Թանկագին տյար Գալստյան, մեծ է Ձեր հերկած անդաստանը, մեծարժեք է Ձեր հերկը, ուստի և մեծ են մեր՝ Ձեզ ծանաչողների, Ձեր ներկայությունը վայելողների երախտագիտությունն ու խոնարհումը:

Քաջառողջություն և արևշատություն Ձեզ, անդադրում բեղունություն Ձեր գրչին:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ  
Բանասիրական գիտությունների  
թեկնածու

## Մեծատաղանդ գիտնականն ու սիրված մանկավարժը 85 տարեկան է

Կյանքի 85-րդ տարին բոլորեց անվանի լեզվաբան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Աշոտի Գալստյանը:

Նշանավոր հայագետն ու սիրված ուսուցչացետը ծնվել է 1929 թ. Կապանի շրջանի Կեմանց գյուղում: 1947 թ. ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը, 1952-ին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1953-56 թթ. ուսանել է համալսարանի ասպիրանտուրայում: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: 1962 թ. վերադարձել է մայր բուհ և շուրջ կես դար աշխատել հայոց լեզվի ամբիոնում: 1987 թ. Սերգեյ Գալստյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Գիտնականի գրչին են պատկանում հայերենի գրեթե բոլոր բնագավառներին վերաբերող բազմաթիվ մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր, տարաբնույթ բառարան-

սիրված են ածանցման առանձնահատկությունները և ածանցյալ բառերի կաղապարները, նախածանցավոր և վերջածանցավոր բաղադրությունները, ածանցման ածանցավոր հիմքերը, բայական ածանցման առանձնահատկությունները, ածանցների հոմանշության և հարակից այլ խնդիրներ: Նշված գիտական արժանիքների համար աշխատությունը բարձր գնահատվեց մասնագետների կողմից՝ որակվելով որպես նոր խոսք հայ լեզվաբանության մեջ. հեղինակին շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ ածանցներին նվիրված վերոնշյալ ուսումնասիրությունները արդի հայերենի բառակազմական մասնիկների ամենախոր, ամենամաքողջական և ամենահամակողմանի ուսումնասիրություններն են:

Առանձնապես մեծ է պրոֆեսորի վաստակը հայ բառարանագրության տիրույթում: 1975 թ. լույս տեսած մասնագիտական-բացատրական, բազմալեզվյան «Լեզվաբանական բառարանը» (Հ. Պետրոսյանի և Թ. Ղարաբյուլյանի համահեղինակությամբ) նոր տիպի

դոկտրախոսակցական լեզվում:

Վաստակաշատ գիտնականի աշխատասիրությամբ կազմված բառարաններից է մոտ 150 հազար բաղադրյալ բառարանակող «Հայոց լեզվի բառակազմական բառարանը», որտեղ, ըստ առանձին բաղադրիչի, տրվում են յուրաքանչյուր բաղադրության կառուցվածքը, բաղադրյալ բառի աստիճանական կազմությունը, բաղադրության կազմում առաջին անգամ հանդիպող բառարանային ստուգաբանությունը, բաղադրիչների հնչյունափոխության բոլոր դեպքերը, ինչպես նաև արվում գլխաբառի քերականական, ոճական, գործառական նշումներ ու բնութագրումներ:

Սերգեյ Գալստյանը պրոֆ. Խաչիկ Բաղդիկյանի հետ հրատարակել է Հրաչյա Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատության վերջին հատորը: Այն ընդգրկում է Աճառյանի անձնական արխիվի այն ամբողջ նյութը, որի հիման վրա վերջնական ձևավորում պիտի ստանային «Լիակատար քերականության» վերջին 3 հատորները: Այս աշխատանքն արժանի է առանձնակի երախ-

## Շուշարձանների պահպանումն ու կոնսերվացումը օրախնդիր հարց

Հայաստանում հայտնի են հազարավոր պատմական հուշարձաններ, որոնք ազգային հպարտություն են: Սակայն անողոր ժամանակն անում է իր սև գործը: Դրանք հետզհետե ավելի են քայքայվում, կորցնում դարերով պահպանված տեսքն

ու հմայքը:

Օրակարգի հարց է այսօր դրանց պահպանումը:

Նշենք, որ վերգետնյա հուշարձաններն այլ խնամքի կարիք ունեն, իսկ ստորգետնյա հուշարձանները՝ ուրիշ: Հետևապես, ուշադրությունն ու պահ-

պանումն ունեն հետազոտությունների տարբեր ուղղություններ: Ստորգետնյա հուշարձանների փայլուն օրինակ է «Էրեբունի» թանգարանի ամբողջ տարածքը, որը ծածկված է դամբարաններով, և որոնք խիստ կարիք ունեն կոնսերվաց-

ման ու պահպանման: Դրանք օրեցօր ենթարկվում են անձրևաջրերի, ծյան, քամիների, հողմահարությունների: Պատահական չէր, որ ԽՍՀՄ գյուտերի կոմիտեն բարձր գնահատեց այդ գյուտը: Մենք գիտականորեն գտանք դրանց պահպանման միջոցը, և 1976 թ. այն հաստատվեց: Այդ եղանակը հնարավորություն է տալիս հուշարձանները դարձնելու ջրամեկուսիչ, կայունություն ինչպես ջրային, այնպես էլ ագրեսիվ միջավայրում՝ միաժամանակ մեծացնելով ամրությունը, պարզեցնելով մշակման տեխնոլոգիան, փոքրացնելու տնտեսական ծախսերը. չնոռանալով երկարակեցությունը՝ նվազեցնելու ջրային կորուստները, կանխելու փլուզումները և այլն: Ներկայումս Հայաստանը չունի ոչ ֆինանսական, ոչ մարդկային ռեսուրսներ՝ ստորգետնյա հուշարձանները բացելու և շահագործելու համար:

Եվ իրոք, եթե հրաշքով բացվեին ստորգետնյա ամրոցները, ինչպիսի հոսք կսկսվեր զբոսաշրջիկների կողմից, քանի որ դա կլիներ միակը՝ ստեղծված գիտական ուսումնասիրությունների հիման վրա: Ավելորդ չէր լինի համահայկական հիմնադ-

րամի կողմից կազմակերպել դրամահավաք՝ միաժամանակ աշխարհին լսելի դարձնելով մեր մշակած գյուտի անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում վերգետնյա հուշարձանների պահպանումը և կոնսերվացումը:

Գիտական ուսումնասիրությունները բերեցին այն եզրակացության, որ մշակված հուշարձաններն ու դրանց մասերը դարձան ջրամեկուսիչ, ստացան կայունություն ջրային և ագրեսիվ թթուների միջավայրում, ամրության մեծացում, երկարակեցություն: Մշակման տեխնոլոգիան պարզ է. փոքր ֆինանսական ծախսերով մեծ արդյունք: Պակաս կարևոր չէ օգտագործվող հեղուկների չեզոքությունը բնապահպանական առումով: Այն վատ չի ազդում շրջապատի մարդկանց վրա, իսկ բուսականությունն աճում է երկու անգամ արագ և բարձր: Հուշարձանների պահպանության այդ եղանակները մշակել, փորձարկել և ստուգել է տողերիս հեղինակը, որը արտոնագրեր ունի այդ գյուտերի համար:

Ռիմա ՄԱՆՈՒԿՅԱՆ  
Տեխնիկական  
գիտությունների թեկնածու





Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո դաշնակից զորքերը մտան Ստամբուլ:

Դաշնակիցները պարտված թուրքիայի նոր իշխանություններից պահանջեցին քրեական պատասխանատվության կանչել դաշնակից պետությունների դեմ պատերազմ սանձազերծած նախկին ղեկավարներին՝ իթթիհատականներին, որոնք առանց Մեջլիսի որոշման թուրքիային ներքաշել էին պատերազմի մեջ՝ Գերմանիայի կողմում, և կազմակերպել էին շուրջ երկու միլիոն հայերի բնաջնջումը աննկարագրելի դաժանություններով:

Փարիզում կայանալիք առաջիկա հաշտության պայմանագրին մեղքերից սրբված ներկայանալու համար (համաշխարհային հասարակության աչքին թոզ փչելու նկատառումով) 1918 թ. դեկտեմբերին ստեղծվեց Պատերազմական արտակարգ ատյան փաղիշահ Մեհմեդ Զ Վահիդեդդինի կայսերական հրովարտակով, որը գործեց ընդամենը մի քանի ամիս և ընդհատվեց անգլիացիների մեղքով: Արտակարգ ատյանը հազարավոր հանցագործներից հազիվ մի քանի տասնյակի կարողացավ քննել, քանի որ անգլիացիներն իրենց 12 գերի ընկած զինվորների հետ «փոխանակելու» պատրվակով մի քանի տասնյակ իթթիհատական մարդասպանների տեղափոխեցին Մալթա կղզի և ապա ազատ արձակեցին:

Կասկածելի այս գործելակերպը միայն մեծ կաշառքով կարելի է բացատրել: Երիտթուրքերի ոճրագործ ղեկավարությունից դժգոհ էին նաև թուրքերը ոչ միայն հայերի բնաջնջման և նրանց հարստության կողոպուտի համար, այլև երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, պարտության հասցնելու և պատերազմի պատրվակով իրենցից դրամ կորզելու, երկիրը տնտեսապես քայքայելու համար:

Ուստի, թալեսթի իշխանության անկումից հետո՝ 1918 թ. հոկտեմբերի 7-ին, Պուլի բարձրագույն իշխանությունները մայրաքաղաքի և գավառների ղեկավարներին հրամաններ և հրահանգներ ուղարկեցին հայերի տեղահանության և կոտորածների վերաբերյալ թալեսթի իշխանության ժամանակ արված հրամաններն ու դրանց պատճենները ուղարկել Պատերազմական արտակարգ ատյանին կամ Հարցաքննիչ հանձնախմբին:

Նահանգների, գավառների քաղաքային կառավարիչները և զինվորական հրամանատարները սկսեցին հավաքել պահանջված վավերագրեր և ուղարկել Պուլիս: Երբեմն ուղարկված վավերագրերի պատճենների մեջ իսկական բնօրինակներ էին լինում: Այս Ատյանին ուղարկված վավերագրերը մեծ մասամբ ծածկագիր հեռագրերն էին, որոնցում Կենտրոնական կոմիտեն կարգադրում էր բնաջնջել հայերին և հրամանի կատարման մասին զեկուցել իրենց:

Այդ վավերագրերի մեջ էին նաև Պատերազմական նախարարությունից բանակների հրամանատարներին և թեշկիլաթը Մախսուսիեի ավագակապետներին ուղարկված հեռագրերը:

Պատերազմական արտակարգ ատյանի ամենօրյա միստերում բացահայտվում էին բարբարոս հայասպանների կատարած անօրինակ ոճրագործությունները, բռնաբարությունները: Ատյանի վճիռները (կախաղան և այլն) տպագրվում

րը, հատկապես մեծ կարևորություն տալով Պատերազմական արտակարգ ատյանի արձանագրություններին՝ որպես անժխտելի վավերագրերի:

Երեք տարում՝ 1919–1922 թթ., հսկայական նյութ հավաքվեց, որը թուրքիայում պահելը

Հրանտ Ասատուրի արխիվները և:

Սակայն որքան էլ զգույշ էին ոճրագործները իրենց հանցանքները առանց հետքերի կատարելու ուղղությամբ, միևնույն է, բազմաթիվ փաստաթղթեր և վկաներ են խոսում նախապես

բառառ թուրքերենի բազմաթիվ բառեր այժմ փոխարինված են այլ բառերով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն են արաբատառ թուրքերենի վավերագրերի թարգմանությունն ու վերածումը արդի լատինատառ թուրքերենի, ինչպես գրաբարից ենթարդի հայերենի վերածում հին հայերենի տեքստերը:

Ահա Հայոց ցեղասպանության և տարագրության արաբատառ վավերագրերի թարգմանության դժվարին գործին է նվիրվել հայր Գրիգորը՝ ընտրելով ամենավայրագ բնաջնջման ենթարկված Յոզղաթի 70 հայ գյուղերի բնակչությանը ոչնչացնող ոճրագործների դատավարության փաստաթղթերի թարգմանությունը: Գիրքը վերնագրել է «Յոզղաթի հայասպանության վավերագրական պատմությունը»: Այն լույս տեսավ Նյու Յորքում 1980 թ., 468 էջերը երկայունակ են: Երկար ժամանակամիջոց պահանջող այս աշխատանքը, որպեսզի թուրքերի հարձակմանը չենթարկվի, հայր Գրիգորը նյութերը փոխադրել է Նյու Յորք, որտեղ, ծաղկած Գրիգոր կեղծանվամբ, ի կատար է ածել թարգմանությունը: Անգամ հայր Գրիգորի կենսագրականը գրքի սկզբում ներկայացված է շատ հակիրճ տվյալներով. «Միջին արևելյան ծնունդ է: Հաճախած է համալսարաններ թե՛ Արևելքի, թե՛ Եվրոպայի մեջ: Հմտացած է արևելյան և եվրոպական լեզուներում... Երբեք գոհացած չէ հրատարակված ապացույցներով և կարծիքներով... ճանա-



էին պաշտոնական և ոչ պաշտոնական Ստամբուլի բազմալեզվյան թերթերում:

Իհարկե, թերթերի մեծ մասը օսմաներեն էր՝ արաբատառ թուրքերեն: Մոտ 50 ամուս թերթ էր լույս տեսնում, որից բնակչության չնչին մասն էր կարողանում օգտվել:

Դաշնակից երկրների դեսպանները հիշյալ թերթերի օրինակներից ուղարկում էին իրենց կառավարություններին:

Շուտով Ստամբուլի գրադարաններից սկսեցին անհետանալ հայոց ջարդերի վերաբերյալ նյութեր ունեցող թերթերը, հետագայում նաև այլ երկրների գրադարաններից, որպեսզի հայերի բնաջնջման ապացույցները չընկնեն հայոց ջարդերով հետաքրքրվողների ձեռքը: Իհարկե, եթե ինչ-որ տեղ արխիվներում գտնեք որոշ նյութեր հայոց գեոնցիդի վերաբերյալ, ապա դրանք մկրատված են: Այսպես, Հովհաննես Լեփսիուսը իր գրքում օգտվել էր ֆրանսերեն թարգմանված տեքստից, որպես սկզբնաղբյուր, հետագայում պարզվեց, որ այն թերթի է, մկրատվել է թարգմանվելուց առաջ: Նույնը կատարվել է հայ և օտար շատ լրագրերի հետ:

Սակայն շատ հեռատես հայեր կարողացան հավաքել պաշտոնական և ոչ պաշտոնական մյուս թերթերի համարները, որոնցում հայասպանության ապացույցներն էին: Այս աշխատանքն ի կատար ածելու առաքելությունը նախաձեռնեց աքսորից Պուլիս, իր պաշտոնին վերադարձած կաթողիկոս-արքեպիսկոպոս Զավեն Եղիայանը, որ 1919 թ. փետրվարի 19-ին՝ Պուլիս վերադառնալուն պես, որոշեց հիմնել Տեղեկատվության գրասենյակ՝ հավաքելով այնտեղ հայոց տեղահանության, կոտորածների, նրանց ինչքի թալանի վերաբերյալ պաշտոնական և անպաշտոն բոլոր վավերագրե-

վտանգի տակ էր դնում կատարված աշխատանքը: Մուստաֆա Քեմալի ազգայնականները մոտենում էին Պուլիսին և Զմյուռնիային: 1922 թ. օգոստոսին նա որոշեց հավաքված հսկայական նյութը՝ 24 հաստափոր ծրար-

ծրագրված՝ հայերի բնաջնջման փաստի մասին: Այժմ Հայոց ցեղասպանությունն ուրացող թուրքերին միայն Թալեսթի և բժիշկների՝ Շաքիր բեյի և Նազըմ բեյի ստորագրած հեռագրերը բավական չէ՞ն: Օրինակ.

**Վալերի Բուայեն Նոր օրինագիծն է արդեն Տրանսիայի Ազգային Ժողով Ներկայացրել: Տրանսիայի Խորհրդարանի՝ Մարսելից ընտրված պատգամավոր Վալերի Բուայեն «Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող» Նոր օրինագիծ է ներկայացրել Խորհրդարան, տեղեկացնում է թուրքական «Haberler» կայքը:**  
**Համաձայն Նոր օրինագծի՝ Ցեղասպանության ժխտման համար 5 տարվա ազատազրկում և 45 հազար եվրո պատժաչափ է սահմանվելու:**  
**Թուրքական կայքը տեղեկացնում է, որ մոտ 80 հազար հայ բնակչություն ունեցող Մարսելից ընտրված Բուայեն 23 պատգամավորի ստորագրությամբ օրինագիծը նոյեմբերի 4-ին հանձնել է Տրանսիայի Ազգային Ժողովի ղեկավարությանը:**  
**Նոր օրինագիծը ստորագրողների թվում է նաև հայ փաստաբան Պատրիկ Դեմեջյանը:**

ներ, դուրս հանել թուրքիայից դեպի Եվրոպա: Այս թանկարժեք վավերագրերի փոխադրումը Մանչեսթր՝ Եպիսկոպոս Գրիգոր Պալաքյանին ի պահ, նա վստահեց պատրիարք Թորգոմին: Իսկ երբ Պալաքյանին նշանակեցին Մարսելի թեմի առաջնորդ, նա այդ թանկագին գանձը բերեց Մարսել, որտեղից էլ ուղարկեց Երուսաղեմ:

1922 թ. դեկտեմբերին Զավեն կաթողիկոս-արքեպիսկոպոսը, հրաժարվելով իր պաշտոնից, մեկնեց Կիպրոս, որտեղ 1924 թ. բարերար Մելքոնյանը նրան էր լիազորել Մելքոնյան հաստատության հիմնադրումը: 1926-ին նա հրաժարվեց նաև այդ լիազորությունից, որպեսզի ի մի բերի հուշերը: Սակայն հուշերը գրելու համար կարիք ստեղծվեց օգտվել վավերագրերից: Դրանք Երուսաղեմում էին և ապահով ձեռքերում՝ հանձնիս Ա. Ալպոյաջյանի և Կ. Նուրյանի: Ստեղծվեց Տեղեկատու դիվան՝ բազմալեզու փաստաթղթերի, վկայությունների, հայոց ցեղասպանությանն առնչվող նյութերի ժողովածու, որը բաղկացած էր 7.700 կտորից: Դրանց մեջ ընդգրկվել էին Թեոդիկի և

Ներքին գործերի նախարար Թալեսթը հետևյալ ծածկագիր հեռագիրն է ուղարկել Մալաթիա՝ երիտթուրքերի կուսակցության ակումբին.

«Ձեր գավառը ղրկված և հող հավաքված հայերը բնաջնջ ըրեք. բարոյական և նյութական ամեն պատասխանատվություն ինձ պատկանելու պայմանով»:  
«Կետ առ կետ գործադրեցեք հայերին սպանելու մասին ձեզ տրված հրամանը»:

Թալեսթի մեկ ուրիշ շրջաբերական ծածկագիր հեռագիրը.

«Առանց որևէ վարանումի և գուրի բնաջնջեցեք մեկ ամսականից մինչև 90 տարեկան հայերը, միայն թե քաղաքի մեջ և ժողովուրդի աչքի առջև չլինի»:

Ցեղասպանությանն առնչվող վավերագրերը բազմաթիվ են, սակայն մի մեծ թերություն ունեն. դրանք բոլորն էլ գրված են այժմ մեռած լեզու դարձած արաբատառ թուրքերենով կամ օսմաներենով, որը կարդացող և հասկացող ներկայումս աշխարհում շատ քիչ մասնագետներ են մնացել, որովհետև արաբատառ թուրքերենի և արդի լատինատառ թուրքերենի բառերի իմաստը նույնը չէ: Արա-

ցած է միշտ փնտրել և հասնել սկզբնաղբյուր վավերագրեր ու բնագիրներում... Այս պաշտոնական վավերագրերը առաջին անգամ ըլլալով լույս կտեսնեն»:

Պատմաբաններին և հայոց գեոնցիդի հարցերով զբաղվողներին մատչելի դարձնելու համար գոնե ընդհատված Պատերազմական արտակարգ ատյանի նյութերը մեռյալ արաբատառ վիճակից դուրս բերելու ծանր այս աշխատանքը Գրիգորի անգնահատելի նվերն է արմենցիդի ենթարկվածների հիշատակին:

Իսկ թե որքան բարձրադեք է Գրիգորի գիրքը, անհնար է գերազանահատել, որովհետև Հայոց ցեղասպանությունն ուրացող թուրքերը դրանք արդեն ոչնչացրել են արխիվներից, քանի որ դրանք հայաջինջ քաղաքականության անժխտելի վկայակոչումներն են, և որոնք խոսեցրեց հայր Գրիգորը հիշյալ գրքում:

Մնում է՝ նրա գործը շարունակեն հայ թուրքագետները, որոնք պարտք են մնում իրենց ժողովրդին:

**Ներսես ՄԿՐՏՅԱՆ**  
**Բանասիրության դոկտոր**

ԳԻՏՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Ե ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ

# Ո՞ւր փանել ծծմբական թթուն

«Գոլոս Արմենիի» թերթում տպագրված (11 հունիսի 2014թ.) Կարեն Արզումանյանի՝ «Լինի արդյո՞ք խոշոր պղնձածուխական գործարանը» հոդվածի վերաբերյալ ցանկանում ենք հայտնել մեր տեսակետը:

Պղնձածուխական և այլ մետալուրգիական գործարաններ կառուցելու կարևորության և նպատակահարմարության հարցով մենք բազմիցս դիմել ենք ՀՀ կառավարությանը: Վերջին անգամ մեր առաջարկությունները ՀՀ կառավարությանն ենք ուղարկել հունիսի 13-ին, որտեղ հիմնավորված են սև և գունավոր մետաղների ստացման մետալուրգիական գործարաններ կառուցելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Այստեղ, ինչպես և նույն թերթում մի քանի տարի առաջ տպագրված հոդվածում, որտեղ բանախոս էր «Մաքուր երկաթ» գործարանի տնօրեն պարոն Գենիկ Կարապետյանը, առաջ է քաշվում նույն անհեթեթ հարցադրումը՝ «Ո՞ւր տանել ծծմբական թթուն, որը պղնձի ստացման ժամանակ ստացվելու է հարյուր հազարավոր տոննաներով»: Այս կապակցությամբ մենք հոդված էինք ուղարկել «Գոլոս Արմենիի» թերթին, որն էլ, մեր հոդվածը տպագրելու փոխարեն, ուղարկել էր տեսակետի հեղինակ պարոն Գ. Կարապետյանին, վերջինս էլ լռությամբ ու անտարբերությամբ էր ընդունել այն:

Այժմ պարոն Գագիկ Արզումանյանի նմանատիպ հարցազրույցի հետ կապված, մենք

ստիպված ենք մերից անդրադառնալ ծծմբական թթվի հարցին: Նշենք, որ ինչպես Գ. Կարապետյանը, այնպես էլ Գ. Արզումանյանը կարծես թե դեմ են պղնձածուխական կառուցելուն: Ընդ որում՝ առաջինը դեմ է բա-

յան տեսքով, վերջինս էլ կարող է օգտագործվել տեղում (Հայաստանում) սուլֆիդային հանքանյութերի ֆլոտացիոն եղանակով հանքահարստացման գործում: Այս տեխնոլոգիան մշակվել է ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարս-



ցահայտ, իսկ երկրորդը՝ քուղարկված:

Ինչպես Գ. Կարապետյանի տեսակետին ի պատասխան գրված մեր հոդվածում, այնպես էլ ՀՀ կառավարությանն ուղարկված առաջարկում մենք նշել ենք, որ ծծմբական թթվի ստացումը պղնձի ծուլման գործում բոլորովին էլ պարտադիր չէ: Ծծմբական թթվի փոխարեն կարելի է ծծումբը ստանալ քիմիական տարրի և կամ ծծմբային մատրիում քիմիական միացու-

տացման և մետալուրգիայի լաբորատորիայի կողմից ՌԴ մետալուրգիայի և մետաղագիտության ինստիտուտի, Հայգոլմետգիտմախագիծ ինստիտուտի, ինչպես նաև Ալավերդու՝ նախկինում գործող լեռնամետալուրգիական կոմբինատի հետ համատեղ:

Նշված տեխնոլոգիայով պղնձի խտանյութերի վերամշակման էլեկտրաքիմիական տարրալուծման եղանակը էականորեն տարբերվում է ինչ-

պես Ալավերդու՝ նախկինում գոյություն ունեցող, այնպես էլ ՌԴ Բախաշի և այլ լեռնամետալուրգիական կոմբինատներում կիրառվող տեխնոլոգիաներից և ունի մի շարք առավելություններ.

1. արտադրությունն անթափոն է, հունքն օգտագործվում է համալիր և ապահովում է շրջակա միջավայրի անխաթարությունը,

2. պղնձը կորզվում է 97-98%-ով՝ պղնձափոշու տեսքով, որտեղ պղնձ մետաղի պարունակությունը կազմում է 99,8%,

3. պղնձի խալկոպիրիտ ( $\text{CuFeS}_2$ ) ինչպես նաև ծծմբի

հրաքար պիրիտ ( $\text{FeS}_2$ ) հանքանյութերում պարունակվող երկաթ մետաղը կորզվում է 96-97%-ով՝ երկաթի արջասպի տեսքով (ավանդաբար ընդունված եղանակով երկաթը չէր կորզվում և ամբողջությամբ թափվում էր թափոնապղջեր),

4. ծծումբը կորզվում է 95-96 տոկոսով՝ ծծումբ տարրի տեսքով,

5. մնացորդային խարամների մեջ են կուտակվում բոլոր ազնիվ մետաղները (ոսկին, ար-

ծաթը, ինչպես նաև պլատինոիդները), որոնք էլ գործնականում կորզվում են ամբողջությամբ:

Այս եղանակը պաշտպանվել է գյուտարարության երկու հեղինակային վկայականներով:

Այնպես որ հայտնում ենք ի գիտություն այն «պեսիմիստ» անձանց, ովքեր Հայաստանի Հանրապետությունում պղնձածուխարան կառուցելու գործում որպես խոչընդոտ տեսնում են ծծմբական թթուն, որը թողարկվում էր հնացած տեխնոլոգիաներով գործող մետալուրգիական գործարաններում՝ սուլֆիդային հանքանյութերի խտանյութերի վերամշակման և մետաղների՝ պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի և այլնի, կորզման ժամանակ որպես հավելյալ արդյունք: Այժմ այդ «հավելյալ արդյունքի» անհրաժեշտությունը չկա, եթե մետալուրգիական գործարանը (պղնձածուխարանը) կառուցվի ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի կողմից մշակված տեխնոլոգիայի հիման վրա: Այդ գործարանում ստացվող ծծումբ տարրի պահանջարկը շատ ավելին է, քան ծծմբական թթվինը: Այն էլ նշենք, որ 2007թ. մայիս-հունիս ամիսներին ծծմբի մեկ տոննան միջազգային շուկայում վաճառվում էր 650-700 դոլարով (ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին պահանջարկի նվազման հետ կապված, այդ գինը նվազեց մի քանի անգամ, բայց՝ հանդգնած ենք, որ դա այդպես չի մնա, և ծծմբի գինը մերից կբարձրանա): Այնպես որ ՀՀ-ում պղնձածուխարանը պետք է կառուցվի՝ ի հեճուկս չկամեցողների:

**Յրաչյա ԱՎԱԳՅԱՆ**  
Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր

## Ինչո՞ւ են լռում այլմոլորակայինները

Մի իմաստուն ասել է. «Կյանքում ամենազխավոր մարդկային հաղորդակցման շքեղությունն է»։ Սակայն, ամենայն հավանականությամբ, կան բազմաթիվ վերերկրային քաղաքակրթություններ, որոնք մեզ հետ հաղորդակցվելու դուրս իսկ մտադրություն չունեն, կամ դա ցանկալի չէ նրանց։ Ու չնայած բազմաթիվ

փորձերին՝ մարդկությանն առայժմ չի հաջողվում կապ հաստատել արտերկրային քաղաքակրթությունների հետ։

Տիեզերքի լռությունը գիտության համար ամենաանլուծելի և ամենավիրավորական հանելուկներից մեկն է։

Արտերկրային քաղաքակրթությունների գիտական որոնումների հիմնադիր Ֆրենսիս Դրեյկը գտնում էր, որ տիեզերքում գոյություն ունեն առնվազն 200 բարձր զարգացման մակարդակի քաղաքակրթություններ։ Այսօր նրա հետմորդները և աշակերտները այդ թիվը հասցրել են 10 հազարի և ավելի։ Սակայն արդեն 30 տարի տևող որոնումներն ու փնտրտուքները ոչինչ չեն տվել. տիեզերքից ոչ մի արձագանք, տիեզերքը լռում է։

SETI ծրագրին (արտերկրային բանականության որոնում) այսօր միացած է երկրագնդի ամենաընդգրկուն ցանցը։ Գիտական կենտրոններ և անհատներ կարող են ցանկացած պահի տեղեկություն ստանալ և մշակել մոլորակի ամենախոշոր ռադիոաստղադիտակի (Արեսիբո, Պուերտո Ռիկո) տվյալները։ Արեսիբոյի ռադիոաստղադիտակը ի վիճակի չէ մարսելու տեղեկատվության ամբողջ զանգվածը, և մոլորակի 5 միլիոն համակարգիչ կամավոր լծված են այդ գործին։ Սակայն անցած վեց տարվա ընթացքում՝ ոչ մի հուսադրող տվյալ։

Մոլորակի ամենահզոր աստղադիտակները երկար ժամանակ դիտարկում էին (կյանքի գոյության համար նպաստավոր) Թայու Կիտա Էփսիլոն, Էրիդանա Զոդիուկես համաստեղությունները, սակայն ոչ մի

արդյունք։

Առասպելական Օգ երկրի պատվին հղացվեց ՕԶՄԱ նախագիծը՝ նույնպես գրոյական արդյունք։ Ամերիկյան ՆԱՍԱ-ն ձեռնարկել է 10 միլիարդ դոլար արժողությամբ «Կիկլոպ» նախագիծը. միմյանցից 15 կմ հեռավորության վրա տեղադրված հազարավոր ռադիոաստղադիտակներ կարող են տիեզերքից ազդանշաններ ընդունել հազար լուսնային տարվա շրջանագծով և բանականության գոյությունն ստուգել ավելի քան մեկ միլիոն աստղերի վրա՝ սկսած ամենամոտիկից՝ Ալֆա Կենտավրայից։

### Չկայացած հաղորդակցման փուլերը

1600 թ. - Հռոմում՝ Ճաղիկների հրապարակում, խարույկ հանվեց վանական Ջորդանո Բրունոն, որը գտնում էր, թե տիեզերքում կան բազմաթիվ բնակեցված աշխարհներ։


1962 թ. - Եվպատորիայի տիեզերական հեռավոր կապի կենտրոնից տիեզերք ուղարկվեց «Խաղաղություն, Լենին, ԽՍՀՄ» ռադիոազդանշանը։

1974 թ. - Արեսիբո (Պուերտո Ռիկո) ռադիոաստղադիտակից տիեզերք ուղարկվեց կոդավորված ռադիոազդանշան։

1977 թ. - Արձակվեցին Ամերիկյան «Վոյաջեր-1», «Վոյաջեր-2» սարքերը՝ ոսկյա ձայնապնակներով, մեկ միլիարդ տարվա ռեսուրսով։ Ձայնապնակի վրա ձայներիզված է 1000 մեղեդի։

1999 թ. - Սկսվեց SETI (Արտերկրային բանակա-

➤8



# Ինչո՞ւ են լռում...

➤7 նույնիսկ որոնում) ծրագիրը:

2006 թ. - Ամերիկյան ՆԱՍԱ-ն տիեզերք ուղարկեց SIM աստղադիտակը:

2015 թ. - Կարծակվեն ՆԱՍԱ-ի «Կեպլեր» աստղադիտակները, որոնք կոչված են որոնելու կյանքի համար պիտանի մոլորակներ:

## Չորս պարճառ, որոնք հիմնավորում են

### այլմոլորակայինների լռությունը

#### Պրոգնոզի վարկած

Երկրից ուղարկված ռադիոազդանշանն ամենամոտիկ աստղին կարող է հասնել տասնյակ հազարավոր տարիների ընթացքում, և անհամբերություն ցուցաբերել վաղաժամ է: Բացի այդ, միայն մեկ՝ Կաթնծիրի համաստեղությունում հաշվված է 200 միլիարդ աստղ: Խնդիրն անհավանականորեն ավելի բարդ է, քան խոտի դեզում ասելը փնտրելը: Այս համապարփակ խնդրի լուծումը կախված է միկրոէլեկտրոնիկայի և ռադիոաստղադիտակների զարգացումից:

## Ամենամոռայլ վարկածը

Աշխարհի վերջի մասին հիպոթեզը հանգում է նրան, որ տեխնոլոգիական ցանկացած քաղաքակրթություն դատապարտված է կործանման իր իսկ ձեռքով:

## «Կենդանաբանական այգու» հիպոթեզը

Բայց չէ՞ որ աղետից հետո (թեկուզ հաշված թվով) պետք է, որ ոմանք փրկվեին: Կենդանաբանական այգու հիպոթեզն այն է, որ այլմոլորակայինների կողմից երկիր մոլորակը հայտարարված է արգելոց, և փորձի մաքրության նկատառումով նրա բնակիչների հետ հաղորդակցվելն արգելված է:

Մի քիչ շոյող վարկածը հանգում է նրան, որ մենք մեր բանական եղբայրներ համարվող այլմոլորակայինների համար անգիտակից մանուկներ ենք լոկ, և հաղորդակցվելը իրենց հետ հեշտ բան չէ:

Ավստրալիական աստղագետների վերջին հաշ-



վարկները ցույց են տվել, որ երկիր մոլորակը մոտ 2 միլիարդ տարով երիտասարդ է ուրիշ արեգակնային համակարգությունների նմանատիպ մոլորակներից: Այնպես որ մեր շտապողական հույսերը տիեզերքում հարազատներ գտնելու հարցում նման են նախադարձականների օր առաջ մեծանալու երազանքներին:

## Եվ այնուամենայնիվ

Կալիֆոռնիայի SEIT ինստիտուտի առաջատար աստղագետ Սեթ Շոտակը կանխատեսում է, որ համապատասխան բնագավառների բուռն առաջընթացը կհանգեցնի նրան, որ առաջիկա 20 տարվա ընթացքում մարդկությունը մեր համաստեղության սահմաններում անպայման կհայտնաբերի բանական կյանք: Մի պայմանով սակայն, եթե մեր մոլորակից դուրս տիեզերքի որևէ այլ վայրում հիրավի գոյություն ունի այդ բանական կյանքը:

«ԻՉԿԵՍՏԻԱ»

## Յեպաքրքրասերի անկյուն

### «Սարսափի» օրերը հաշվված են

Միացյալ Նահանգների Կոլումբիական համալսարանի գիտնականները հայտնաբերել են պրոտեին, որը մարդու օրգանիզմում սարսափի զգացում է առաջացնում: Հայտնաբերվել է նաև այն գենը, որը պատասխանատու է այդ պրոտեինի գոյացման համար: Ըստ ուրում, այս պրոտեինն առնչվում է և՛ բնական, ի ծնե ունեցած սարսափին, և՛ նաև կյանքի ընթացքում ձեռք բերած սարսափի զգացմանը: Այս հայտնագործությունը կբերի նրան, որ կստեղծվեն դեղամիջոցներ, որոնք մարդու մեջ կծնշեն, կընկճեն սարսափի զգացումն ընդհանրապես, և ինչու չէ, հարկ եղած դեպքում կխթանեն այն:

### Սուրճը անմեղ է հռչակված

Ամերիկացի սրտաբանները բացահայտել են, որ սիրտ-անոթային հիվանդներին համառորեն հանձնարարվող առանց կոֆեինի սուրճը վնասակար է հիշյալ ռիսկի խմբի հիվանդների համար:

Հետազոտողների առաջին խմբին տվեցին սովորական սուրճ, երկրորդ խմբին՝ սուրճ առանց կոֆեինի, իսկ երրորդ խմբին՝ ոչինչ չտվեցին:

Ստուգումները ցույց տվեցին, որ առաջին և երրորդ խմբի հիվանդների օրգանիզմում փոփոխություն տեղի չի ունեցել, իսկ երկրորդ խմբի՝ առանց կոֆեինի սուրճ խմածների, արյան մեջ 10 տոկոսով ավելացել

է ճարպաթուրների քանակը, հենց այն ճարպաթուրների, որոնք օրգանիզմում ստեղծում են «վատ» խոլեստերին:

Գիտնականներն առաջին չեն կարողանում բացատրել այս երևույթի պատճառը:

Մի բան, սակայն, պարզ է. շատ արգելքներ, որոնք բժշկությունը պարտադրում է մեզ, ըստ էության վնասակար են: Ինչ վերաբերում է սուրճին, ապա վաղուց կարծիք կար, որ այն անվնաս է, անգամ՝ օգտակար: Դրա նոր հաստատումը եղավ ամերիկացիների նոր հետազոտությունը:

### Ակնոցները վրանգավոր են

Միացյալ Նահանգների վիճակագրության տվյալներով ակնոց է կրում 96 միլիոն ամերիկացի: Եվ ամեն տարի գրանցվում է 13 հազար վնասվածք, որոնք անմիջականորեն կապված են ակնոցների հետ: Վնասվածք ստացողների 6 տոկոսը հոսպիտալացվում է: Ակնոցներից խեղվածների 10 տոկոսը բաժին է ընկնում տրանսպորտային պատահարներից տուժածներին: Բժիշկները հետևողականորեն բնակչությանը համոզում են օգտագործել ակնոցների շրջանակների և ոսպնյակների կոնստրուկցիայի համեմատաբար անվտանգ տեսակներ: Սակայն առ այսօր ակնոցները և ոսպնյակները փոփոխվում են միայն ու միայն դիզայնի տեսակետից, իսկ խեղումները շարունակվում և աճում են:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոնի» «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը հայտարարում է հեռավար դասընթացների մեկնարկի և հեռավար դասընթացների գործերի ընդունելության մասին:

Հեռավար դասընթացներին գրանցվելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը (մինչև ս.թ. դեկտեմբերի 13-ը):

- Այցելեք <http://vle.sci.am/moodle/index.php>
- Այնուհետև ընդհանուր դասընթացների բաժնում ընտրեք այն դասընթացը կամ դասընթացները, որոնց ցանկանում եք մասնակցել:
- [distance@isec.am](mailto:distance@isec.am) էլեկտրոնային հասցեին ուղարկեք Ձեր անձնագրի պատճենը, դիպլոմի պատճենը, ինչպես նաև այն դասընթաց(ներ)ի անվանումները, որոնց ցանկանում եք մասնակցել:
- Ձեր էլեկտրոնային փոստին կստանաք նամակ հետագա քայլերի ցուցումներով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԳԱԱ «Հայկենսապրոտեոմի» ԳԱԿ-ը հայտարարում է մրցույթ գիտական պաշտոնների թափուր տեղերի համար**

Կենսաբանորեն ակտիվ նյութերի շտամ-արտադրիչների սելեկցիայի լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (գենետիկ)	1 տեղ
Առաջատար գիտաշխատող (գենետիկ կենսաքիմիկոս)	2 տեղ
Գիտաշխատող (կենսաքիմիկոս)	2 տեղ

### Կենսատրանսֆորմացիայի լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (մանրէաբան)	1 տեղ
Ավագ գիտաշխատող (քիմիկոս)	1 տեղ
Գիտաշխատող (մանրէաբան)	1 տեղ
Կրտսեր գիտաշխատող (քիմիկոս)	3 տեղ

### Մետաբոլիզմի ինժեներիայի լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (գենետիկ)	1 տեղ
Առաջատար գիտաշխատող (գենետիկ)	1 տեղ
Ավագ գիտաշխատող (մանրէաբան)	2 տեղ
Գիտաշխատող (գենետիկ)	1 տեղ

### Կենսասինթեզի տեխնոլոգիայի լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (կենսատեխնոլոգ)	1 տեղ
Ավագ գիտաշխատող (կենսատեխնոլոգ)	1 տեղ
Կրտսեր գիտաշխատող (կենսատեխնոլոգ)	1 տեղ

### Կենսամիմետիկ կատալիզի լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (քիմիկոս)	1 տեղ
Կրտսեր գիտաշխատող (քիմիկոս)	2 տեղ

### Ազոտֆիքսող մանրէների լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (մանրէաբան)	1 տեղ
Առաջատար գիտաշխատող (մանրէաբան)	1 տեղ
Գիտաշխատող (մանրէաբան)	5 տեղ

### Ֆոտոսինթեզող մանրէների լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (մանրէաբան)	1 տեղ
Կրտսեր գիտաշխատող (մանրէաբան)	1 տեղ

### Երկրամանրէաբանության լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (մանրէաբան)	1 տեղ
---------------------------------	-------

### Մանրէների կենսաքիմիայի լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ (կենսաքիմիկոս)	1 տեղ
Գիտաշխատող (կենսաքիմիկոս)	2 տեղ
Կրտսեր գիտաշխատող (կենսաքիմիկոս)	1 տեղ

### Պեպտիդների սինթեզի լաբորատորիա

Գիտաշխատող (քիմիկոս)	1 տեղ
----------------------	-------

Մրցույթի պայմաններին կարելի է ծանոթանալ «Հայկենսապրոտեոմի» ԳԱԿ-ի կայքում ([armbiotech.am](http://armbiotech.am)) կամ դիմել կենտրոնի գիտքարտուղարին:

Դիմումներն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Հասցե՝ «Հայկենսապրոտեոմի» ԳԱԿ, Երևան 0056, Գյուրջյան փ. 14, հեռ. (37410) 65-41-80:

Գ ի տ ռ ի թ յ ո լ լ

Գլխավոր խմբագիր՝  
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:  
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է տպագրության՝ 28.11.2014 թ.:  
"ТІТҮТІОН" ("Hayka") razeta HAH PA